ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

19 փետրվարի 2024թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ՄԽ-Ո-06
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Արուսյակ Ջուլհակյանի, Սոնա Խալաֆյանի, Նինա Փիրումյանի, Արթուր Հովսեփյանի և Արմեն Ասատրյանի կազմով, 2024թ. փետրվարի 19-ին իրականացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածի, 1-ին մասի, 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը սահմանում է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Խորհուրդն իր՝ 11.01.2024թ. որոշմամբ, սահմանել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Ուսումնասիրելով հավակնորդ Նվարդ Վարդանյանի 05.02.2024թ. ներկայացրած հայտը՝ Խորհուրդը

Պ Ա Ր Զ Ե Տ

Նվարդ Վարդանյանի ներկայացրած փաստաթղթերը ամբողջական են և համապատասխանում են Խորհրդի 11.01.2024թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

Հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 10.2-րդ հոդվածի 10-րդ և 13-րդ մասերը՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել Նվարդ Վարդանյանի հայտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՈՆԱ ԽԱԼԱՖՅԱՆ

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ